



ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միկրոտէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՎԱԶԵ ԱՂԱՄՅԱՆ

Ազրարային համալսարանի Արցախի մասնաճյուղի դասախոս

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Հոդվածում քննարկվում են ներկա փուլում ՀՀ-ում տեղի ունեցող բարեփոխումների անհրաժեշտությունը և ուղղությունները, մասնավորապես՝ նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների բարձրացումը, փոքր ու միջին ձեռնարկությունների հարկերից ազատումը, գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորման ծավալների աճը, էլեկտրաէներգիայի սակագնի նվազեցման հիմքերը և այլն: Դիտարկվում է բնօգտագործման վճարների վերանայման խնդիրը՝ հօգուտ պետական բյուջեի:

Հիմնաբառեր. *նվազագույն աշխատավարձ, կենսաթոշակ, փոքր ու միջին ձեռնարկություններ, գյուղատնտեսական վարկեր, էլեկտրաէներգիայի սակագին*

JEL: J3, J38, J26

Ներկայումս մեր հանրապետությունում ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ հարկային գրեթե բոլոր բնագավառներում անհրաժեշտ են արմատական փոփոխություններ, որպեսզի կասեցվի բացասական սպասումների ընկալումը, ներդրումների անվտանգության ապահովման համար ստեղծվեն

պայմաններ և վստահություն: Հարկ է կարճ ժամանակահատվածում իրականացնել մի շարք անհետաձգելի միջոցառումներ: Այսպես՝

- *Միջին կենսաթոշակի չափն անհրաժեշտ է համապատասխանեցնել նվազագույն կենսապահովման զամբյուղի մակարդակին՝ օրենքի ուժով:*

Բնականաբար, հարց է առաջանում՝ ո՞ր աղբյուրների հաշվին:

Նախևառաջ, կարևորագույն և հիմնական աղբյուրներից մեկը տնտեսական աճն է՝ տարեկան առնվազն 8–10% և ավելի:

Նշենք նաև, որ 1% տնտեսական աճն ապահովում է պետական բյուջեի շուրջ 16 մլրդ դրամ մուտքեր: Այսպիսով՝ 10%-ի դեպքում դա կազմում է 160 մլրդ դրամ, իսկ ավելի աճի դեպքում՝ ավելին:

Անհրաժեշտ է նշել նաև, որ երբ քննարկվում է թոշակների կամ աշխատավարձի բարձրացման խնդիրը, առնվազն միամտություն է մտածելը, թե դրա համար նախօրոք պետք է գանձապետարանում պահել մի քանի հարյուր միլիարդ դրամ գումար: Երբ մեր համաքաղաքացիներին վճարում են, ասենք՝ լրացուցիչ 15–20 հազ. դրամ, դրա մեծ մասը վերջիններս էլ վճարում են ծառայությունների և ապրանքային շուկաներում, այլ ոչ թե խնայում են, հատկապես՝ թոշակառուները: Սպառման սահմանային գործակիցը ՀՀ-ում կազմում է 0.97–0.98%, այսինքն՝ առավելագույնը: Դա նշանակում է, որ լրացուցիչ տրված գումարները երեք ամսվա ընթացքում կվերադառնան պետական բյուջե՝ հարկերի տեսքով: Հիմնավորումները կարելի է անվերջ շարունակել:

- *Անհրաժեշտ է բարձրացնել նվազագույն աշխատավարձի շեմը: Ո՞ր աղբյուրների հաշվին:*


Բացի մատնանշված աղբյուրներից, արմատապես պետք է փոխվի բնօգտագործման վճարի հաշվարկման և գանձման մեխանիզմը: Այսպես՝ 1 տոննա մետաղական հանքանյութի պարագայում գործող 600 դրամի փոխարեն պետք է սահմանել 1800–2400 դրամի վճար. ներկայումս պետական բյուջեն բնօգտագործման վճարից ստանում է 23.3 մլրդ դրամ, վերահաշվարկի դեպքում դա կկազմի շուրջ 50–60 մլրդ դրամ:

Այդ են վկայում նաև ներքոնշյալ աղյուսակն ու գծապատկերը:

Աղյուսակ 1

Պղնձի տվյալ գնի պայմաններում արտադրական ծախսերի, շահույթի և ռոյալթիի չափը

Պղնձի գինը (ԱՄՆ դոլար)	4000	5000	6000	7000	8000	9000
Արտադրական ծախսեր՝ 1 տոննա հանքաքար (ԱՄՆ դոլար)	11	11	11	11	11	11
Ընդամենը արտադրական ծախսեր (ԱՄՆ դոլար)	11 մլն	11 մլն	11 մլն	11 մլն	11 մլն	11 մլն
Շահույթ (հազ. ԱՄՆ դոլար)	(1498.7)	1573.3	4645.3	7717.3	10789.3	13861.3
Ռոյալթիի 1-ին մասը՝ հասույթից 4%	380 052	502 932	625 812	748 692	871 572	994 452
Ռոյալթիի 2-րդ մասը՝ հասույթից 12,5%	-	196 663	580 663	964 663	1 348 663	1 732 663
Ընդամենը ռոյալթի	380 052	699 595	1 206 475	1 713 355	2 220 235	2 727 115



Պղնձի գների շարժընթացը 2009–2017 թթ.

Փաստորեն, անցած ութ տարիների ընթացքում 1 տոննա պղնձի միջազգային բորսայական գինը միջինում կազմել է շուրջ 7000 ԱՄՆ դոլար, իսկ վճարված ռոյալթին և ձեռնարկությունների շահույթը տատանվել է շուրջ 5–6 անգամ:

Ակնհայտ է, որ լեռնահանքային ձեռնարկությունները պարբերաբար ստացել են գերշահույթ այն դեպքում, երբ ընդերքը ամբողջ ժողովրդի սեփականությունն է:

- *Առաջիկայում որոշ ժամանակով փոքր և միջին ձեռնարկությունները պետք է ազատվեն հարկերից, իսկ մինչև 30 մլն ՀՀ դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտներին անհրաժեշտ է ընդհանրապես ազատել հարկերից, այդ թվում՝ պետական ռեզիստրում որպես ԱԶ կամ իրավաբանական անձ գրանցվելու պարտավորությունից:*

Շրջանառության հարկ, արտոնագրային և հաստատագրված գումար վճարողների՝ պետական բյուջե մուծած հարկերի չափը կազմում է ամբողջ մուտքերի ընդամենը 1.2–1.3 տոկոսը: Այս մասով այդ հարկերից հրաժարվելը կարող է լրացուցիչ տնտեսական ակտիվության խթան դառնալ. կարճաժամկետում փոքր բիզնեսները կընդլայնվեն, այնուհետև դրանց վճարած հարկերը ավելի մեծ մաս կկազմեն բյուջեի ընդհանուր մուտքերի մեջ: Այսպիսով՝ կաշխատի արագացուցչի (աքսելերատոր) էֆեկտը, որը ցույց է տալիս եկամտի աճի և այդ աճն ապահովող լրացուցիչ ներդրումների միջև կապը (լրացուցիչ ներդրումներն էլ կլինեն չվճարված հարկերը):

ՀՀ-ում գործում են շուրջ 58 հազ. շրջանառության հարկ վճարողներ, 18–19 հազ. արտոնագրային հարկ վճարողներ, 700–800 հաստատագրված հարկ վճարողներ:

Նրանց վճարած հարկերի ընդհանուր գումարը պետբյուջեում կազմում է 18–19 մլրդ դրամ: ՓՄՁ-ներին ազատելով հարկերից՝ կխթանվի նոր աշխատատեղերի ձևավորումը և ներդրումների իրականացումն այդ ոլորտում:

Շուրջ 25 հազ. սուբյեկտներ, փաստորեն, օրական վաստակում են առավելագույնը 5–7 հազ. դրամ, ուստի այդ ոլորտում գործող մեր տնտեսավարողների համար պետք է բարենպաստ պայմաններ ստեղծել: Դա է վկայում նաև միջազգային փորձը:

- *Հարկային պարտավորությունների չկատարման հետևանքով կուտակված շուրջ 60 մլրդ ՀՀ դրամ տույժերի և տուգանքների մասով անհրաժեշտ է կիրառել հարկային համաներում:*

Այս դրույթի կյանքի կոչումը, պայմանավորված հարկ վճարողների՝ մեծ ծավալների հասնող կուտակված հարկային պարտավորություններով, որոնք ներկա պայմաններում կատարման ցածր հավանականություն ունեն, էականորեն կնպաստի նաև բյուջեի եկամտային մասի կատարմանը, քանզի, ինչպես ցույց է տվել նախկին հարկային համաներումների փորձը, հաշվեգրված տույժերից ու տուգանքներից ազատումը կշահագրգռի հարկ վճարողներին՝ կատարելու տարիներ ի վեր չկատարված հարկային պարտավորությունները՝ այդպեսով մեղմելով թե՛ սեփական հարկային բեռը, թե՛ նպաստելով բյուջեի կատարմանը:

Վստահորեն կարելի է ասել, որ սա կբարձրացնի ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության մակարդակն այն առումով, որ ներկա հետձգանաժամային փուլում հարկատուների կուտակված հարկային տույժ ու տուգանքները (չհաշված չարամտորեն հարկերից խուսափողներին) հաճախ անհեռանկար են դարձնում ձեռնարկատերերի հետագա գործունեությունը:

Այսօր ակնհայտ է՝ եթե երկրում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի հետևանքով, հաճախ նաև հարկային և այլ օրենսդրական փոփոխությունների, դրամի կտրուկ արժեզրկման, արտաքին շուկաների ցնցումների և այլնի պատճառով տնտեսավորողի չվճարած տույժ ու տուգանքները մի քանի անգամ գերազանցում են ձեռնարկատիրության մայր գումարը, ապա այդ բիզնեսը դառնում է անիմաստ:

- *Պետության կողմից պետք է վարկավորվեն և խրախուսվեն գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող անհատներն ու ընկերությունները:*

Այս դրույթի անհրաժեշտությունը պայմանավորված է ոլորտի պետական աջակցման քաղաքականության ընդլայնման, գյուղացիական վարկերի հասանելիության և մատչելիության ապահովման առաջնահերթություններով:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, երբ հանրապետության սոցիալ-տնտեսական խնդիրներին գումարվում են նաև ոլորտի՝ բնակլիմայական պայմաններից կախվածությունը և, միաժամանակ, այն հանգամանքը, որ վարկառուի վարկի մարման հիմքում, դեպքերի մեծամասնությունում, բերքի իրացման համալիր շղթայի արդյունավետ կազմակերպումն է, առաջարկվող փոփոխությունը կարող է էականորեն նպաստել ոլորտի աշխուժացմանն ու գյուղացիների համար սոցիալական խնդիրների մեղմացմանը:

Մեր հանրապետությունում այսօր գյուղատնտեսության ոլորտում աշխատում է 436 հազ. մարդ, ունենք շուրջ 320 հազ. գյուղացիական տնտեսություն: Գյուղաբնակների ճնշող մեծամասնությունը վարկերի բեռի տակ է: Ընդհանուր առմամբ, այսօր ՀՀ-ում կա 1 մլն 400 հազ. վարկառու, իսկ թե ինչպիսի բարձր տոկոսներով են տրվել և տրվում այդ վարկերը (22–26%), նույնպես հայտնի է: Մարդիկ դրա հետևանքով կորցնում են իրենց սեփականությունը, տները: Դա պետք է կանխել: Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքը չպետք է գերազանցի 3–5%-ը, իսկ անցած 7–8 տարիների ընթացքում 0.25–1.25%-ով միջազգային ֆինանսական կառույցներից ստացված վարկերը տասնապատիկ բարձր տոկոսադրույքներով ՓՄՁ-ներին և գյուղացիներին տրամադրած չինովնիկները պետք է վերադարձնեն այդ գումարները:

- Անհրաժեշտ է նվազեցնել գազի գործող սակագինը, քանի որ սահմանին 1000 մ³ գազը ՀՀ-ն ստանում է 150 ԱՄՆ դոլարով, իսկ վերջնական սպառողին (այդ թվում՝ բնակչությանը) տրամադրվում է առնվազն երկու անգամ բարձր գնով:
- Հարկ է նվազեցնել նաև էլեկտրաէներգիայի սակագինը, քանի որ մեր հանրապետությունում էլեկտրաէներգիայի շուրջ 60–65%-ն արտադրում են հիդրոէլեկտրակայանները (ՀՀ-ում գործում է ավելի քան 200 հէկ) և ատոմային էլեկտրակայանը: Ընդ որում, հէկերի արտադրած 1 կվտ/ժ էլեկտրաէներգիայի միջին ինքնարժեքը կազմում է 2–5 ՀՀ դրամ, իսկ ԱԷԿ-ինը՝ 5–7 ՀՀ դրամ:
- Մաքսային ոլորտում պետք է վերացնել, այսպես կոչված, «հսկիչ գների» կիրառումը:

Հայտնի է, թե ինչ է կատարվել տարիներ շարունակ այս ոլորտում: Անընդունելի է, երբ ապրանքների մաքսագերծման ժամանակ տնտեսավարողին պարտադրվում են անհասկանալի գներ, որը բյուջեն և սեփական գրպանները լցնելու նպատակ է հետապնդում միայն:

- Պետք է վերանայել հանքարդյունաբերության բնագավառում բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման մեխանիզմը՝ հօգուտ պետական բյուջեի:

Հանրապետության հիմնական հարստություններից է ընդերքը, որը համաժողովրդական սեփականություն է: Մենք չունենք նավթ և գազ, սակայն ունենք մոլիբդեն և պղինձ, ոսկի և ռենիում, այլ օգտակար հանածոներ:

Պետք է ապահովել դրանց համալիր օգտագործումը, տեղում թողարկել վերջնական արտադրանք: Հանրապետությունում տարեկան արդյունահանվում է շուրջ 33 մլն տոննա մետաղական հանքանյութ, որից ստացվում է շուրջ 350 հազ. տոննա պղնձի խտանյութ, մոտ 20 հազ. տոննա մոլիբդենի խտանյութ, 3.5 տոննա ոսկի և այլն:

1 տոննա հանքանյութին առնչվող բնօգտագործման վճարը կազմում է ընդամենը 600 դրամ: Կարծում ենք՝ անհապաղ պետք է վերանայել վճարի այդ չափը՝ հօգուտ պետական բյուջեի: Կրկնում ենք՝ ընդերքը համաժողովրդական սեփականություն է, և ոչ ոք իրավունք չունի «դրանով տաքացնել սեփական ձեռքերը»:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.mnr.am/>.
2. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայք՝ <http://www.psrc.am/>.
3. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ <http://www.competition.am/>.
4. Մելքումյան Մ., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, Եր., «Ջանգակ-97», 2014:
5. Մելքումյան Մ., Ձեռնարկատիրություն և բիզնես, Եր., «Ջանգակ-97», 2006:

МИКАЕЛ МЕЛКУМЯН

Заведующий кафедрой микроэкономики и организации предпринимательской деятельности АГЭУ, доктор экономических наук, профессор

ВАЧЕ АДАМЯН

Преподаватель Арцахского филиала Аграрного университета

Основные пути преодоления посткризисной стадии экономики РА: администрация и практика.– В статье рассматриваются необходимость и направления реформ, происходящих в Армении. В частности, увеличение минимальной заработной платы и пенсий, освобождение от налогов малого бизнеса, объем, рост субсидируемых сельскохозяйственных кредитов, основы для снижения цен на электричество и так далее. В статье также рассматривается вопрос о пересмотре выплат по природопользованию в пользу госбюджета, потому что это национальная собственность, и никто не имеет право «нагреть свои руки» на ней.

Ключевые слова: минимальная заработная плата, пенсии, малые и средние предприятия, сельскохозяйственные кредиты, тариф на электроэнергию.

JEL: J3, J38, J26

MIKAYEL MELKUMYAN

Head of the Department of Microeconomics and Organization of Entrepreneurial Activity at ASUE, Doctor in Economics, Professor

VACHE ADAMYAN

Lecturer at the Artsakh Branch of Agrarian University

The Main Ways of Overcoming the Postcrisis Stage of the RA Economy: Administration and Practice.– The article discusses the current trends and the necessity of the reforms taking place in Armenia. In particular, the increase in the minimum wage and pensions, small business tax exemption, the increase in volume of subsidized agricultural loans, the grounds for reducing the price of electricity and so on. The article discusses the issue of revision of environmental fees, as well, in favor of the state budget, because it is the crust of national property and no one has the right "to heat their own hands" on it.

Key words: minimum salary, pension, small and medium enterprises, agricultural loans, the electricity tariff.

JEL: J3, J38, J26